Արտակ Ղազարյան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1919 Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր. դիվանագիտական ներկայացուցիչ, բոլշևիկներ, Կովկասյան Հանրապետություններ, կամավորական բանակ, հայկական պատվիրակություն, Վրաստանի դեմոկրատական հանրապետություն, Լևոն Եվանգուլյան, Հայաստանի ներկայացուցիչ Վրաստանում:

1919 թ. սկիզբը Հայաստանի Հանրապետության համար չափազանց բարդ ու խճճված հայ-վրացական հարաբերությունների կարգավորման մի նոր փուլի սկիզբ էր: Սկիզբ, որի հետագա ընթացքը շատ, ծավալվող գործառույթների խորքային միտումները միանգամայն մշուշոտ ու անորոշ էին: Հայ-վրացական պատերազմից հետո, 1919 թ. հունվարին, տեղի ունեցավ հայ-վրացական կոնֆերանս, որտեղ քննարկվեցին ու լուծում ստացան բազմաթիվ տնտեսական ու քաղաքական հարցեր, որոշումներ ընդունվեցին վերասկսելու խզված դիվանագիտական հարաբերությունները, կարգավորելու երկաթուղային հաղորդակցության, առևտրա-տնտեսական փոխհարաբերություններին, ռազմագերիների փոխանակությանը, տրանզիտին, ինչպես նաև սահմանա-տարածքային վեճերին վերաբերող հարցերը:

1919 թ. մարտի 6-ին Լևոն Եվանգուլյանը նշանակվեց Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ, որը մեծ հեղինակություն էր վայելում Հայաստանի և Վրաստանի կուսակցական-քաղաքական շրջաններում, փոխարինելով Վրաստանում *persona non grata* ճանաչված Արշակ Ջամալյանին: Սակայն այսքանով բոլոր խնդիրները չլուծվեցին և հայ-վրացական հարաբերությունները միանգամից և անխոչընդոտ չմտան բնականոն հունի մեջ: Կային բազում ներքին և արտաքին մարտահրավերներ, որոնց դիմակայելը մեծ դժվարությունների առաջ էր կանգնեցրել ոչ միայն Հայաստանի Հանրապետությանը, այլև ամբողջ Անդրկովկասին, այդ թվում և Վրաստանին, որն ուներ իր «մեծապետական» շահերը: Այս ամենին գումարվում էր նաև Անդրկովկասյան հանրապետությունների ներքին տարաձայնությունների հարցը, մասնավորապես տարածքային հարցերում, որոնց վերաբերյալ օր առաջ համաձայնության կայացումը կարող էր լուրջ խթան հանդիսանալ Անդրկովկասյան պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի զարգացման համար: Սակայն հասկանալի է, որ այդ տարաձայնությունները կարգավորելը այդքան էլ դյուրին չէր, որովհետև ինչպես ցույց տվեց 1919 թ. ապրիլին կայացած անդրկովկասյան կոնֆերանսի աշխատանքների ընթացքը և քննարկված հարցերի շուրջ ծավալված մտքերի փոխանակությունը և խուլ հակամարտությունը, հարևան պետությունների ցանկություններն ու ակնկալիքները, մեղմ ասած, իրար հետ չէին համընկնում:

Այս կոնֆերանսում, որը բացվեց 1919 թ. ապրիլի 27-ին Թիֆլիսում վրացական կողմի ջանքերով առաջին պլան մղված Կոնֆեդերացիայի գաղափարը առաջին անգամ դարձավ կովկասյան չորս հանրապետությունների անդրանիկ խորհրդաժողովի գլխավոր թեմաներից մեկը,: Հայաստանի կողմից կոնֆերանսին մասնակցում էին Արտգործնախարար Ս. Տիգրանյանը, Արդարադատության նախարար Ս..Հարությունյանը և ՀՀ. խորհրդարանի անդամ Ստ. Մամիկոնյանը, Վրաստանի կողմից՝ ԱԳ նախարար Եվգ. Գեգեչկորին, Ներքին գործերի նախարար Ն.Ռամիշվիլին, և ելևմտական նախարար Կանդելակին. Ադրբեջանի կողմից՝ վարչապետ Ֆ. Խան-Խոյսկին, Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկերկայացուցիչ Մ. Ջաֆարովը և Խաս-Մամեդովը. Լեռնականների միության կողմից՝ Կանտեմիրովը, Բուգդաևը և Պանգուրաևը[1]:

[1] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 367:

Կոնֆեդերացիայի խնդիրը պետք է ասել, որ լինելով Վրաստանի ղեկավար շրջանների մոտ հասունացած և նրանց իսկ կողմից առաջադրված ռազմավարական լուծումներից, այն հաշվարկի և քաղաքական հենքի վրա էր հենվում, ըստ որի բոլոր չորս պետությունների բարեկեցությունը պահանջում է ստեղծել փոխադարձության վրա հիմնված համերաշխության մթնոլորտ՝ հիմնված նրանցից յուրաքանչյուրի անկախության փոխադարձ պաշտպանության վրա, ինչի հիման վրա էլ երկորդ պլան էին մղվում առաջնային համարվող սահմանատարածքային խնդիրները:

1919 թ. փետրվարի 21-ին Արտաքին գործերի նախարար Եվգ. Գեգեչկորին մի շրջաբերական ուղղեց Հայաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի ու Դաղստանի Լեռնականների Համադաշնության հանրապետություններին: Վրացական կառավարությունը կամենում էր պարզել, կայի՞ն արդյոք առարկություններ քննարկելու այնպիսի խնդիրներ, ինչպես բեռնափոխադրումները, սակագները, առևտուրն ու ֆինանսները, քանի որ համաձայնագրերը մասնավորապես այս բնագավառներում կարող էին հասցնել շատ ավելի էական հարցերի լուծման: Գեգեչկորին խնդրում էր առաջարկություններ անել այս հարցերի քննարկման ամենաարդյունավետ միջոցների մասին, ավելացնելով, որ իր կառավարության համոզմունքով, դրանցից առավել համապատասխանը անդրկովկասյան ընդհանուր խորհրդաժողով գումարելն է[1]:

Սակայն ուղերձի մատուցման եղանակը ամբողջովին հակառակն էր այն հրամայական ծանուցումների, որոնք հանգեցրել էին 1918 թվականի աշնանը անդրկովկասյան խորհրդաժողովի վիժեցմանը և էլ ավելի էին վատթարացրել հայ-վրացական հարաբերությունները: Այս հանդիպման ժամանակը, կառուցվածքը և օրակարգը պետք է որոշվեին խորհրդակցությունների և փոխադարձ համաձայնության ճանապարհով, ինչը անտեսվել էր: Բայց ինչպես վկայում էին փաստերը, Վրաստանը իրեն դոմինանտ դեր վերագրելով անդրկովկասյան տանը և իրեն տանտեր զգալով, ինքն էր միանձնյա որոշել հանդիպումների ու խորհրդաժողովի քննարկվելիք հարցերի օրակարգը: Լեռնականների արհեստականորեն ձևավորված ու անկայուն հանրապետությունը շատ արագ ընդունեց Անդրկովկասի համեմատաբար ապահով և հիմնավորված պետությունների հետ խորհրդակցելու հրավերը, իսկ Ադրբեջանն էլ իր հերթին առաջարկեց, որ օրակարգը ընդլայնվի, ներառելով այնպիսի հիմնարար հարցեր, ինչպիսիք էին Փարիզի Հաշտության վեհաժողովում միացյալ անդրկովկասյան ճակատի ստեղծումը, տարածքային խնդիրների կարգավորումը և տարածաշրջանային պաշտպանական ծրագրի նախապատրաստումը ցանկացած արտաքին ուժի դեմ, որի մեջ Հայաստանը չէր տեղավրվում Վրաստանի և Ադրբեջանի հետ իր շահերի անհամատեղելիության հետևանքով:

Բացի օրակարգի հարցից, քննարկման նյութ էր նաև խորհրդաժողովի անցկացման տեղի հարցը: Ադրբեջանի վարչապետ և Արտաքին գործերի նախարար Ֆաթհալի Խան-Խոյսկու կարծիքով, Բաքուն հավաքի ամենահարմար վայրն էր, բայց նա նշում էր նաև, որ չէր ընդդիմանա, եթե այն Թիֆլիսում տեղի ունենա՝ նախընտրելով մարտ ամիսը: Նա պնդում էր, որ Կարսի Հարավ-Արևմտյան Կովկասյան Հանրապետությունը, որը այն ժամանակ դեռևս գոյություն ուներ, պետք է ներգրավվեր խորհրդաժողովում՝ նրա մասնակցությունը համարելով «ցանկալի և անհրաժեշտ», ինչը սակայն համակրանքի և հավանության չարժանացավ Վրաստանում և Հայաստանում, որոնց շահերը այս խնդրում որոշակիորեն համընկնում էին:

Պետք է նշել, որ 1919 թ. ապրիլի 4-ի գրությամբ Հայաստանի Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը տեղեկացրել էր Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանին, որ նա հանձնարարություն ունի բանակցելու Վրաստանի կառավարության հետ գումարվելիք կոնֆերանսի կազմի, ծրագրի, տեղի և ժամանակի մասին: Ըստ կառավարության կողմից տրված հանձնարարականի, Լ. Եվանգուլյանը պետք է հայտներ խորհրդաժողովի հրավիրող կողմին, որ Հայաստանի

[1] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, առաջին տարին 1918-1919 թթ., հ. I, Ե., 2005, էջ 388:

Հանրապետությունը համաձայն էր որ կոնֆերանսին մասնակցեին միայն չորս հանրապետություններ՝ Վրաստանը, Ադրբեջանը, Լեռնականների Հանրապետությունը և Հայաստանը: Ս. Տիգրանյանը Եվանգուլյանին հանձնարարել էր, որ նա պաշտոնապես առարկի Ադրբեջանի կողմից բարձրացված խնդրի առնչությամբ, ըստ որի կոնֆերանսի պետք է հրավիրվեր և մասնակցեր նաև այսպես կոչված, Հարավ-Արևմտյան Կովկասյան Հանրապետությունը, որը Հայաստանի համար միանգամայն ընդունելի չէր[1], ինչի հետ այնուհետև մասնակիորեն համերաշխվեց նաև Վրաստանը:

Այսպիսով, վեջ ի վերջո, որոշակի տարակարծություններից հետո դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանգուլյանը Գեգեչկորուն հաղորդում է Հայաստանի պատրաստակամության մասին՝ միանալու խորհրդաժողովին, պայմանով, որ սահմանային հիմնահարցը լուծվի երկկողմ և ոչ թե քառակողմ կազմով: Հայաստանը շարունակում էր վախենալ մի ուժեղ բլոկի ուրվականից, որտեղ ինքը միայնակ դեմ-հանդիման կկանգներ Վրաստանի, Ադրբեջանի և Լեռնականների հանրապետությունների միավորված քվեներին: Իրականում, սակայն, Վրաստանը հարևան մահմեդական պետությունների հետ ուներ լուրջ խնդիրներ և լարվածության որոշակի հիմքեր պահպանող հարաբերություններ, քանզի մի շարք տարածքներ վեճի առարկա էին, իսկ Ադրբեջանի աջակցությունը Հարավ-Արևմտյան Կովկասյան Հանրապետությանը՝ Վրաստանը համարում էր սադրիչ միջամտություն:

Այստեղ առաջացավ մի իրավիճակ, երբ Վրաստանը և Հայաստանը միակարծիք էին, որ կոնֆերանսին Հարավ-Արևմտյան Կովկասյան Հանրապետությունը չմասնակցի: Մինչ ծայրահեղ ազգայնական վրացական մամուլը ահազանգում էր հայկական «գառան մորթի հագած գայլերին» վստահելու դեմ՝ առնվազն այնքան ժամանակ, մինչև որ տարածքային հարցում ձեռք բերվեր վերջնական լուծում, Ն. Ժորդանիայի կառավարությունը իր ջանքերը միավորեց Հայաստանի հետ՝ համատեղ դիմադրելու Կարսի տեղական մուսուլմանական վարչությանը խորհրդաժողով հրավիրելու մտադրությանը: Խուսանավման մարտավարությամբ երկու քրիստոնեական երկրները համաձայնվեցին ընդամենը խորհրդակցական ձայնի իրավունք տալ Հարավ-Արևմտյան Կովկասյան ժամանակավոր կառավարությանը, պայմանով սակայն, որ Ադրբեջանը համաձայնվի նման ներկայացուցչության՝ Լեռնային Ղարաբաղի համար: Ադրբեջանը, բնականաբար, չէր կարող վտանգել իր անկայուն տիրապետությունը հայաբնակ լեռնաստանում՝ Լեռնային Ղարաբաղի, լռելյայն համաձայնվելով այդպիսի մի առաջարկության: Հարավ-Արևմտյան Կովկասյան Հանրապետության տապալումը ապրիլի կեսերին և Կարսի գրավումը հայկական ուժերի կողմից վերացրին խնդրի այդ կողմը: Ադրբեջանն այլևս չպնդեց Կարսի պատվիրակների ընդգրկման վրա, իսկ Հայաստանն էլ, ինքնըստինքյան, ընդունեց որ Լեռնային Ղարաբաղի համար ամբիոն նվաճելը այդ պահին նպատակահարմար չէ[2]:

Կոնֆերանսի առաջին նիստը տեղի ունեցավ ապրիլի 25-ին, այն կրում էր կիսապաշտոնական բնույթ, որովհետև Լեռնականների և Ադրբեջանի պատվիրակների բացակայում էին: Պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2 օր անց՝ ապրիլի 27-ին: Կոնֆերանսի մասնակիցները ի սկզբանե բաժանվեցին 2 մասի, որոնցից առաջինը պետք է զբաղվեր տարածքային հարցով, մյուսը՝ փախստականների: Այն, որ տարածքների հարցը պետք է քննվեր առանձին հանձնաժողովի կողմից, խոսում էր այն անհաշտելի հակասությունների ու դժվարությունների մասին, որը գոյություն ուներ Անդրկովկասյան պետությունների միջև[3]: Ավելի քան վեց շաբաթ պատվիրակները քննարկում էին ամենաբազմազան տնտեսական և պետական հիմնահարցեր՝ հայ և մահմեդական փախստականների կացությունը, Փարիզի հաշտության վեհաժողովի աշխատանքը և կովկասյան հանրապետությունների փոխադարձ հարաբերությունները: Չնայած լիագումար նիստերի սակավությանը, անընդմեջ երկխոսություններ էին ընթանում մի քանի

[1] ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 111, թ. 17:
[2] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 389:
[3] Туманян М., Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., с. 162.

հատուկ հանձնաժողովների և ոչ պաշտոնական տեսակցությունների միջոցով, որոնք ընդգրկում էին երկու և ավելի պատվիրակություններ: Երկարատև հանդիպումները, սակայն ստացված արդյունքներ չնչին էին, եթե, իհարկե, կարող էին արդյունքներ ակնկալվել: Տարաձայնությունները բավականին շատ էին և պոռթկում էին գրեթե ամեն մի քննարկվող խնդրի շուրջ: Ադրբեջանը պահանջում էր լրացուցիչ ամառային արոտավայրեր ունենալու իրավունք Հայաստանի լեռներում և մահմեդական այն գաղթականների տունդարձը, որոնք փախել էին Անդրանիկի պես *«պարտիզանական հրոսակներից»*: Հայաստանը պահանջում էր անարգել տարանցիկ արտոնություններ ամբողջ Անդրկովկասում, և Ադրբեջանի ռազմական ուժերի դուրսբերումը Ղարաբաղից: Վրաստանը պնդում էր, որ իր հարևանները չխառնվեն իր «ներքին գործերին»: Իսկ լեռնականները հորդորում էին բոլորին՝ պաշտպանել Թերեքը և Դաղստանը ռուսական կարմիրգվարդիականներից, ռուսական սպիտակ բանակներից, կազակներից, զանազան այլ խմբապետերից[1]:

Ե՛վ վրացական, և՛ ադրբեջանական պատվիրակությունները պահանջում էին, որ տարածքային բախումների հարցը քննարկվի լրիվ կազմով, բայց հայերը շարունակում էին խուսափել: Ադրբեջանական ներկայացուցիչ Խաս-Մամեդովը պատճառաբանում էր, որ երկրորդական խնդիրների լուծումն անիմաստ կլիներ, մինչև որ հարևան հանրապետությունների սահմանները որոշակիորեն չգծվեին: Ոչ այդքան որոշակի, վրաց ներկայացուցիչ Ռամիշվիլին արտահայտեց տիրող ընդհանուր կարծիքը, որ սահմանների հստակեցումը, թեև մեծապես ցանկալի, սակայն բացարձակ նախադրյալ չէ փոխադարձ հարաբերությունների բարելավման համար: Նվազ վիճելի խնդիրների վերաբերյալ համաձայնությունը կարող էր լավագույնս ցույց տալ կայուն, հարգված սահմաններ հաստատելու ուղին: Առավել ևս, որ բոլորին էլ հասկանալի էր, որ սահմանների հարցում համաձայնության գալը ամենաբարդ խնդիրներից մեկն էր երեք Հանրապետությունների հարաբերություններում:

Կոնֆերանսին մասնակցող մյուս կողմերը հենց այս խնդրում էին գլխավորապես, հայկական պատվիրակության ընկերակցությունը որոնում ու գնահատում: Հանրապետությունների ազատությունն ու անկախությունը ճանաչել տալու և միահամուռ ջանքերով ու ուժերով պաշտպանելու խնդիրն էր դրված քննարկման սեղանին: Այս հարցերը քաղաքական մասնաժողովի քննությանն էին հանձնված, այստեղ Ս. Տիգրանյանը հայտարարում է, որ կառավարությունից հրահանգ ունի, և որ ընդհանուր ճակատ ստեղծելու հարցը կարելի է կարգավորել միմիայն սահմանավեճերը փոխադարձ համաձայնությամբ կարգավորելուց հետո: Հայաստանի Հանրապետության Արտգործնախարարը պարզաբանում տվեց, որ այդպիսի քաղաքական գործակցության համար անհրաժեշտ է հող ու հիմք պատրաստել, ընդհանուր շահերին ու անհրաժեշտ խնդիրներին փոխադարձ օժանդակությամբ գոհացում տալով, ինչպիսիք էին օր. երկաթուղային, տրանզիտի, ապրանքների շրջանառության և այլ խնդիրները, կարծելով, որ միայն այդ հիմքի վրա է հնարավոր համերաշխության և բարեկամության մթնոլորտ ստեղծել: Սակայն այս քաղաքական բացատրությունները առանձին գործնական հետևանքներ չունեցավ: Եղավ մի կարճատև շրջան, երբ թե վրացիք, թե թաթարները մի փոքր զիջումներ անելու գնով հայերի հետ համաձայնության գալու հակումներ ցույց տվին: Այդ շրջանը զուգադիպեց մայիսի կեսին Փարիզից եկած սուրհանդակի գալու և թերևս կապակցված էր Փարիզից ստացած իրենց համար ոչ նպաստավոր տեղեկությունների հետ: Հայկական պատվիրակությանը ի դեմս Ս. Տիգրանյանի և ակտիվորեն գործին մասնակցող Թիֆլիսում ՀՀ հանձնակատար Լևոն Եվանգուլյանի, առաջարկներ հակընդդեմ ներկայացրին տեսակցել, քննարկել և համաձայնության գալ սահմանային-տարածքային խնդիրներում: Հայկական պատվիրակության անդամները համաձայնվեցին ընդառաջ գնալ վրացական կողմին և այս անգամ վրացիների կողմից Պ.Ս.Գ. Մդիվանին եկավ բանակցելու, որի ժամանակ հայերը պնդեցին Խրամի վրա: Մդիվանին մի փոքր զիջում անելով իրենց նախկին պահանջից, պնդեց Ալավերդու վրա

6 Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 390:

և դրանով էլ բանակցությունները փակուղի մտան՝ ոչ որոշակի լուծումով, իսկ գործնականում՝ անհետևանք: Իսկ թաթարները (ադրբեջանցիները) մինչև վերջն էլ խուսափեցին որևէ կերպ բանակցել սահմանավեճերի շուրջ[1]:

Եվ այսպիսով, խորհրդաժողովի ձեռք բերած վերջնական արդյունքը՝ կարգավորելու միմյանց հակասող պահանջները, սկզբունքների երեք կետերից բաղկացած հայտարարության ընդունումն էր.

1. Անդրկովկասի ներքին սահմանները պետք է գծվեն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի համապատասխան:

2. Միայն սահմանամերձ շրջաններն են լինելու հայցի կամ բաժանման առարկա:

3. Սահմանային հողերի բաժանումը պետք է լինի շահագրգռված հանրապետությունների փոխհամաձայնության արդյունք կամ, դրա չգոյության դեպքում՝ իրավարարության:

Ռուսաստանի հետ Անդրկովկասի հարաբերությունների հետ հարցի քննարկման ժամանակ Հայաստանը իր հարևաններից մեկուսացած վիճակում էր: Հենց նույն Թիֆլիսի խորհրդաժողովի ժամանակ գեներալ Դենիկինի Կամավորական բանակը վիճարկում էր Վրաստանի Սև ծովի առափնյա շրջանը՝ Սոչիի և Սուխումի միջև, ներխուժելով Լեռնականների Հանրապետություն և չքողարկելով իր մտադրությունները ռազմավարական նավթառատ Բաքվի նկատմամբ, որը վերջերս դարձել էր Ադրբեջանի մայրաքաղաքը: Այս էր պատճառը, որ մասնավոր հանդիպումներում, երբ քննարկվում էր միասնական պաշտպանական ճակատ ստեղծելու հարցը, վրաց ներկայացուցիչները փորձեցին համոզել Արտաքին գործերի նախարար Տիգրանյանին, որ Հայաստանը հակվի տարածաշրջանային պաշտպանական դաշնագիր կնքելու Դենիկինի դեմ և կամ, առնվազն, դատապարտի Կամավորական բանակի նախահարձակ լինելու հանգամանքը և Լեռնականների հանդեպ բարյացակամ չեզոքություն պահպանելու խնդիրը: Վրացիների պնդմամբ, համընդհանուր շահերը պահանջում էին, որ Անդրկովկասը միասնական ճակատ կազմի արտաքին ներխուժման դեմ: Պատեհ առիթից օգտվելով, Ս. Տիգրանյանը իր կողմից մի փոքր ճնշում գործադրեց՝ հայտարարելով, որ Հայաստանը բավականաչափ կայունություն չի կարող հուսալ՝ մասսնակցելու այդպիսի միությանը կամ չի կարող զգալի օգնություն ցույց տալ, մինչև որ քննարկվող սահմանավեճերը չլուծվեն: Եթե Տիգրանյանը հավատար և Հայաստանի Հանրապետությունը վստահեր, որ Վրաստանը իր զորամասերից կազատի Լոռին և Ախալքալաքը, որ Ադրբեջանը ձեռք կքաշի Լեռնային Ղարաբաղից՝ իբրև հատուցում Հայաստանի հետ համագործակցության, ապա չափազանց միամիտ կլիներ, ապա այդ դեպում այլ հնարավորություններ կառաջանային Դենիկինի կամ Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի հետ հարաբերությունների, առավել ևս՝ հնարավոր առաջարկվող հակամարտության հիմքեր ունեցող պաշտպանական միության ստեղծման խնդրում, որի դեպքում ՀՀ-ն այլ ռազմավարություն կորդեգրեր: Իհարկե, այդպիսիք նա չէր էլ ակնկալում, և դա գործնականում իրատեսական էլ չէր շահերի անհամատեղելիության արդյունքում: Ավելի շուտ, Տիգրանյանի մարտավարության նպատակն էր՝ խուսափել նույնիսկ որևէ գրավոր համաձայնությունից՝ ուղղված Հարավային Ռուսաստանի զինյալ ուժերի դեմ:

Ի վիճակի չլինելով ապահովելու հայերի համաձայնությունը պաշտպանական-հակադենիկինյան դաշինքին այս ոչ պաշտոնական քննարկումների միջոցով, վրացական և ադրբեջանական պատվիրակությունները փոխեցին իրենց ռազմավարությունը և խնդիրը ներկայացրեցին խորհրդաժողովի լիագումար նիստին: 1919 թ. հունիսի 9-ին, երբ Թերեքը և Դաղստանի մեծ մասը գրավված էին Կամավորական բանակի կողմից, Գեգեչկորին և Խան-Խոյսկին պաշտոնական առաջարկ մտցրեցին Դենիկինի դեմ անդրկովկասյան պաշտպանական համակարգ ստեղծելու վերաբերյալ: Չնայած հարցն արդեն մեջտեղ էր դրված, Տիգրանյանը պարտավորություն ստանձնելուց ազատվելու համար դիմեց խուսանավումների՝ սոսկ առաջարկելով, որ Անդրկովկասում արտաքին ագրեսիան դատապարտող ընդհանուր հայտարարություն ուղարկվի Փարիզի Հաշտու-

7 ՀԱԱ, Ֆ. 275, ց. 5, գ. 111, թ. 64:

թյան վեհաժողովին: Սպիտակ բանակների հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու շահագրգռությունները խիստ էական էին, որպեսզի թույլ տային Հայաստանին՝ որևէ այլ հակակեցվածք ընդունելու: Այս հարցում վրացական և ադրբեջանական քողարկված սպառնալիքները ի դերև ելան խախտելու հայկական որոշումը՝ ստորագրելու մի անորոշ հայտարարություն և ոչ ավելին: Անդրկովկասյան խորհրդաժողովն այս հարցի վրա էլ գտավ իր վախճանը: Լեռնականների Հանրապետությունն այդ հայտարարագրի ընդունումից հետո գրեթե անհետացավ խորհրդաժողովի նիստերից և հազվադեպ էր երևում նիստերում, իսկ ո՛չ Վրաստանը, ո՛չ էլ Ադրբեջանն այլևս չէին կարող ժամանակ կորցնել: Երկու երկրներն արդեն նախաձեռնել էին անհրաժեշտ նախապատրաստությունները երկկողմանի դաշնագրի համար, և այն՝ առանց Հայաստանի Հանրապետության մասնակցության, ստորագրվեց հունիսի 16-ին և այնուհետև վավերացվեց Ադրբեջանի ու Վրաստանի հանրապետությունների պառլամենտների կողմից:

Անդրկովկասյան խորհրդաժողովը փակվեց հունիսի երկրորդ շաբաթվա ընթացքում, համարյա առանց որևէ պաշտոնականության և հանդիսավոր արարողության: Երբ հայկական պատվիրակությունը գնացք էր նստում Երևան մեկնելու համար, Թիֆլիսի երկաթուղային կայարանը եռուզեռի մեջ էր: Կառամատույցում հայտնվել էր զինվորական նվագախումբը: Այն եկել էր ոչ թե ճանապարհելու ՀՀ Ազ նախարար Տիգրանյանին և հայ մյուս պատվիրակներին, այլ դիմավորելու գեներալ Սամեդ բեկ Մեհմանդարովին՝ Ադրբեջանի զինվորական նախարարին: Վրաստանը և Ադրբեջանը մերձեցել էին Կամավորական բանակի վերահաս վտանգի դեմ-հանդիման: Ավելին, երկու հանրապետությունների համոզմունքով, որ դժվար էր չհասկանալ, հյուսիսի հզոր ագրեսորի և հարավի իրենց փոքր քույր հանրապետության շահերի միջև իրենց համար անընդունելի, որոշակի ընդհանրություն կար: Հայաստանը վերստին մեկուսացած էր[1]: Խորհրդաժողովը տևեց ավելի քան 3 շաբաթ, և կարելի է ասել, ոչ մի հարցի շուրջ կոնկրետ համաձայնություն չկայացավ,եթե հաշվի չառնենք հակահայկական միտվածություն ունեցող ադրբեջանա-վրացական պաշտպանական դաշինքը: Ինչպես արդեն նշել ենք, օրակարգի հարցերն էին՝ սահմանաբաժանման խնդիրը, քոչը, գաղթականության վիճակի կարգադրությունը, հաղորդակցության ու ելևմտական միջոցները, դիվանագիտական ու պաշտպանողական համագործակցությունը և այլն, որոնց բոլորի շուրջն էլ համարյա առաջ եկան տարակարծություններ, և խորհրդաժողովը գործնականում անարդյունք եղավ: Խորհրդաժողովի ընթացքում սակայն Ադրբեջանի և Վրաստանի կողմից ավելի որոշակի խնդիր համարվեց թերևս միայն Կամավորական բանակի կողմից սպառնացող վտանգը Կովկասին, որի պայմաններում վրացիներն ու ադրբեջանցիները միմյանց ընդառաջ գնացին և առաջադրեցին գեներալ Դենիկինի գլխավորած Կամավորական բանակի դեմ զինակցություն կնքելու առաջարկը: Հայերը միանշանակ մերժեցին, և այդ ժամանակ վրացիներն ու ադրբեջանցիները կնքեցին առանձին ռազմաքաղաքական բնույթի պաշտպանական դաշինք, որով պարտավորվում էին, ռուսական հարձակման պարագայում, մեկ-մեկի ռազմական աջակցություն ցույց տալ: Դաշինքի կնքումից հետո Թիֆլիս ժամանեց Ադրբեջանի զինվորական նախարար «զոր. Մեխմանդարովը և տեղի ունեցան աղմկոտ ցույցեր վրաց-ադրբեջանյան բարեկամության մասին»[2]:

Այդ առթիվ, Արտգործնախարար Ս. Տիգրանյանը գրել է իր 1919 թ. հունիսի 16-ի զեկուցման մեջ. «Մդիվանին օրեր առաջ ասել էր, թե՝ եթե հայերդ չգիջեք, մենք ստիպված կմիանանք թաթարների հետ: Մեր քաղաքական գործակցության անհրաժեշտությունը մերժել էին, իսկ մեր չեզոքությունը, առանց դաշնագրի ու կոմբինացիայի, ապահովելու հաստատ ու բավարար միջոցը գտել էին Հայաստանի ներսը և դուրսը մուսուլմանների հարձակումներով ու սպառնալիքներով մեր ուժերը զբաղեցնելու, ջլատելու և չեզոքացնելու մեջ (Ղարաբաղի, Օլթիի, Կաղզվանի, Շարուրի, Նախիջևանի դեպքերը): Եվ այն երևաց, երբ մենք՝ Հայաստանի մինիստրներս՝ անշուք և անուշադիր

8 Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 292-393:
9 Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 367:

մեկնում էինք Թիֆլիսի կայարանից, նույն կայարանում Վրաստանի մինիստրները պատվո պահակով, երաժշտախմբով, շուքով դիմավորում էին Թիֆլիս ժամանող Մեխմանդարովին՝ Ադրբեջանի զինվորական մինիստրին»[1]: Կոնֆերանսի աշխատանքների անպտղությունը, ինչպես նշում էր Հայաստանի Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը, աշխատասիրության կամ եռանդի հետևանք չէր: Ընդհակառակը, մասնաժողովները ամենայն ջանասիրությամբ աշխատեցին և եթե քիչ չէին այն հարցերը որոնց շուրջը համաձայնություն չստացվեց՝ մասնաժողովների մեղքը չէր: Կոնֆերանսը իսկապես չգտավ մի ընդհանուր, ամենքին հասկանալի, ամենքին համոզիչ և միացնող լեզու: Երեք հանրապետությունների պատվիրակությունները, ինչպես որ եկան որպէս երեք առանձին ու իրարից որպես անջատ կողմեր, այնպես էլ մեկուսացած մնացին մինչև վերջ: Չգտնվեց այն ընդհանուր հողը, որի վրա բոլորը միասին պիտի կանգնեին, չստեղծվեց այն ջիղը, որը բոլորին պիտի շաղկապեր և դարձներ մեկ ընդհանուր միություն: Կարծես թե ամենքին պարզ էր այն նպատակակետը, որ կարող էր և պետք էր այդ դերը կատարեր, բայց պատշաճ լրջամտությամբ չէր յուրացվել այդ նպատակն ու խնդիրը իր բոլոր պահանջներով ու պայմաններով[2]:

Այդ էր պատճառը, որ քննության դրված ընդհանուր հարցերը լուծում չստացան: Հակասությունները կողմերի միջև բավականին շատ էին, և ոչ մեկը պատրաստ չէր զիջելու առանցքային հարցերում: Հատկապես սուր էին տարածքային սահմանազատման և ընդհանուր պաշտպանական ճակատ ստեղծելու հարցերը: Հենց այս քննարկումներն էլ ավարտվեցին անարդյունք: Կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր հնարավորինս լուծել իր արտաքին պաշտպանական հարցերը: Վրաստանը համոզում էր Հայաստանին, որ վերջինս համաձայնվի տարածաշրջանային պաշտպանական դաշնագիր կնքելու Դենիկինի դեմ կամ դատապարտի Կամավորական բանակի նախահարձակումը և լեռնականների հանդեպ պահպանի բարյացակամ չեզոքություն: Վրացիները պնդում էին որ բոլորի համընդհանուր շահերից է բխում, որ Անդրկովկասը միասնական ճակատ կազմի արտաքին ներխուժման դեմ:

Ադրբեջանը պահանջում էր լրացուցիչ ամառային արոտավայրեր Հայաստանի լեռներում, պահանջում էր մահմեդական և գաղթականների տունդարձը և որ ամենակարևորն է՝ սահմանագծման հարցը և այլն: Իսկ լեռնականները հորդորում էին բոլորին՝պաշտպանելու Դաղստանը և Թերեքը Կամավորական բանակից ու զանազան հրոսակներից: Թերևս հասկանալի էր, որ այս բոլոր խնդիրների կարգավորումը պատմական այդ շրջանում, Անդրկովկասյան երեք հանրապետությունների ու Հյուսիսային լեռնականների միահամուռ ջանքերի դեպքում, թերևս անլուծելի էր,քանզի պատմական իրադարձությունները այլ ուղի էին ընտրել նրանցից յուրաքանչյուրի համար:

Артак Казарян, Апрельская 1919 года конференция закавказских государств в Тбилиси и дипломатическое представительство Армении в Грузия. В начале 1919-го года Армения и другие страны Закавказья столкнулись с многочисленными внутренними и внешними проблемами. Чтобы решить эти проблемы, в 1919 году, в апреле в Тбилисе была созвана конференция для решения стоящих перед ними проблем. Однако очень немногие из этих вопросов были решены. Поскольку разногласий между ними было довольно много, и никто не был готов отказаться от ключевых позиции.

Ключевые слова: дипломатический представитель, большевики, Кавказские Республики, грузино-азербайджанский Военно-Политический Альянс, добровольческая армия, армянская делегация, Грузинская Демократическая Республика, Левон Евангулян, вооруженные силы юга России, представитель Армении в Грузии.

10 Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 368:
11 ՀԱԱ, Ֆ. 275, ց. 5, գ. 111, թ. 66-67:

Artak Ghazaryan, Conference of the Transcaucasian states in Tbilisi in 1919 and the diplomatic representation of Armenia in Georgia. At the beginning of 1919, Armenia and other countries of Transcaucasus faced numerous internal and external problems. In order to solve these problems, in 1919 a conference was held in Tbilisi in April. However, very few of these issues were resolved as there were quite a lot of disagreements between them, and no one was ready to give up key positions.

Key words: diplomatic representative, the bolsheviks, Caucasian Republics, Georgian-Azerbaijani Military-Political Alliance, volunteer army, armenian delegation, Georgian Democratic Republic, Levon Evangulyan, armed forces of the south of Russia, representative of Armenia in Georgia.